

“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ,”

ՀԱՅԵՐԱՆԻ ՄԻՍՏՈՒՄՆԵՐԻ ԲԵՐԻՔ

ԽԵ. ՏԱՐԻ — 1931

Կը խմբագրուի եւ կը հրատարակուի
ՄԵՒԻԹԱՐԻՏԵՆ ՄԻՇԿԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵՆԷ Ի ՎԻԵՆՆԱ
աշխատակցութեամբ ազգային եւ օտար Բանասէշններու:

Որպէս զի անլի մատչելի դառնայ Ուսումնասիրութեան
օտարալեզու արեւելագէտներուն, յովազարութիւնս
շարունակաբար պիտի ներկայացնէ նաեւ կարեւոր
բանասիրական յօդուածներուն համառոտ մէկ ամփո-
փումը, միջազգային որ եւ է լեզուաւ:

Բաժանորդագրին է առեւ նրկրի
համար՝ 1 ստերլինգ, կամ թիկ:

Մեր հասցէն՝

REDACTION DE LA REVUE “HANDES AMSORYA,”

VIENNE (Autriche), VII, Mechitharistengasse 4.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Խմբագրութեան նորարկումով):

- | | |
|---|---|
| 211. Գրիգորեան Լեւոն, Բանաստեղծութիւններ: Ա. պրակ: Երեւան 1929, 8 ⁰ , էջ 24: Գինն՝ 30 Կ.: | Կոլտնտեսութիւնների կազմակերպական ասպարիզում: Երեւան, 1929, Պետհրատ, փոքր 8 ⁰ , էջ 140: Գինն՝ 30 Կ.: |
| 212. Գիւնդիս Ա., Բանվոր, ամբարշտու կօպերատիվի Ֆինանսները: Երեւան 1929, 8 ⁰ , էջ 38: Գինն՝ 5 Կ.: | 219. Զուրաբեան Մարօ, Ապրանքը: Թիֆլիս, 1929, 8 ⁰ , էջ 36: Գինն՝ 15 Կ.: |
| 213. Դ. Ն., Ի՞նչ է սպեցիֆիկը եւ ինչ՞ո՞ւ էնք պայքարում նրա դէմ: Երեւան 1929, 8 ⁰ , էջ 52: Գինն՝ 15 Կ.: | 220. Թարգմանական պատմաժանրեր: Պրակ Բ.: Երեւան, 1929, 8 ⁰ , էջ 31: Գինն՝ 12 Կ.: |
| 214. Դարբինեան Մ., Կիկոսը. վիպակ: Երեւան, 1929, 8 ⁰ , էջ 107: Գինն՝ 50 Կ.: | 221. Թոքովեց վահան, Ամերիկա. պատմաժանրեր: Երեւան, 1929, 8 ⁰ , էջ 142: Գինն՝ 75 Կ.: |
| 215. Դարբինիս վ. Պ., Զիբրի արհեստական բեղմնաւորումը: Երեւան, 1929, 8 ⁰ , էջ 40: Գինն՝ 25 Կ.: | 222. — — Ասատուր եւ Կլէոպատրա. վիպակ: Երեւան, 1929, 8 ⁰ , էջ 36: Գինն՝ 30 Կ.: |
| 216. Դուրգարեան Մ., Ի՞նչպիսի գիրք է պէտք նախադպրոցականին: Երեւան, Պետհրատ, 1929, փոքր 8 ⁰ , էջ 35: Գինն՝ 8 Կ.: | 223. Թումանեան Յովհ., Ընտիր գրուածներ. Պ. Մակինցեանի խմբագրութեամբ եւ առաջարկով: Երեւան, 1929, 8 ⁰ , էջ 74: Գինն՝ 50 Կ.: |
| 217. Եղիազարեան Ա., Սոցիալիստական շինարարութեան ճանապարհին: Երեւան, 1929, 8 ⁰ , էջ 47: Գինն՝ 10 Կ.: | 224. Իսահակեան Ս., Կոնգրու ասիատենտի տեղեկատու: Կազմեց — —: Երեւան, 1929, 8 ⁰ , էջ 60: Գինն՝ 60 Կ.: |
| 218. Եվդիկիմով Ա., Կոմերիա միութիւնը | |

“HANDES AMSORYA,”

MONATSSCHRIFT FÜR ARMENISCHE PHILOGIE

XLV. JAHRGANG — 1931

Herausgegeben und redigiert von der
MECHITHARISTEN-KONGREGATION IN WIEN

unter Mitwirkung zahlreicher Armenisten.

Um unseren nichtarmenischen P. T. Abonnenten die Benützung unserer Zeitschrift zu erleichtern, werden wir fortlaufend von den wichtigen philologischen Abhandlungen ein kurzes Resumé in einer europäischen Sprache geben.

Preis dieses Jahrganges 1 Pfund Sterling.

Unsere Adresse:

ԱԻԵՏԻՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԱՐՓԻԱՐԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐԳ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Ամենապատիւ Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզեան, իւր պարարտ ծերութեան հասակին եւ հիւանդութեան պատճառաւ, զգալով իւր ոյժերը տկար՝ վարելու յառաջ այն բարձր եւ պատասխանատու պաշտօնը, զոր ստանձնած էր երկար տարիներէ ի



վեր, հրաժարած էր ամիսներ յառաջ կաթողիկոսական եւ պատրիարքական գահէն եւ առանձնացած Հոմ, անդորրութեան մէջ անցնելու իւր կեանքի վերջին տարիները: Յաջորդի ընտրութեան համար գումարուեցաւ ի Բէյրութ հոկտեմբերի երկրորդ շաբաթը հայ կաթողիկէ եպիսկոպոսներու ընտրական Սիւնհոդոսը: Ուրակութեամբ հնչեց համբաւը, թէ Հոկտ. 17ին հռչակուած է Գեր. Աւետիս Արքեպիսկոպոս Արփիարեան Կաթողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ Պետրոս ԺԳ. յորջորջմամբ:

Նորին Ամենապատուութիւնը ունի իւր ետեւ գործունէութեան երկար տարիներ, բազմապատակ եւ արդիւնաշատ:

Ծնած է Ալն, հայաշատ եւ բարեհամբաւ ոստանը, 13 Ապրիլ 1856 իբրեւ անդամ՝ Արփիարեան ընտանիքի: Այն ինչ թօթափած մանկութեան անգիտակից տարիները՝ կը զարթնու իր մէջ կրօնասէր ոգին եւ ձգտումը բոլորանուէր նուիրուելու կրօնի ծառայութեան՝ կ'առաջնորդէ իր քայլերը Յաւիտենական Բաղար, ուր Ուրբանեան Վարժարանին մէջ կը թեւակոխէ բարձրագոյն ուսումներու՝ կրօնի եւ գիտութեան: 1884, Մարտ 9ին կը բաշխէ իրեն քահանայական ձեռնադրութիւնը Գեր. Աղեքսանդր Վ. Պաշտան, Արքեպիսկոպոս եւ անդամ՝ Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան:

Նորընծայ քահանայն կը փութայ քիչ յետոյ վերադառնալ հայրենիք, ուր ի սկզբան ի Զեքուշ (1884—1886), ապա յԱրաբկիր (1886—1889) կը գործէ իբրեւ ժողովրդապետ կաթողիկէ հաւատացելոց: Վեցամեայ գործունէութեան այս շրջանը կ'ըլլայ արդիւնաւոր եւ կը ձգէ իր վրայ ուշադրութիւն:

1890, Նոյեմբեր 16ին, Ստեփանոս Պետրոս Ժ. Ազարեան ի վեր հանելով իր մէջ արժանիք՝ կը ձեռնադրէ գինքը Խարքերդի թեմին եպիսկոպոս: Առջատ եւ բազմատանջ հայ ժողովրդեան հովիւ եւ մխիթարութիւն պիտի ըլլար Արփիարեան: Դառնութեան քաժակին բաժնեկից եւ զրկանքի եւ տառապանքի արցունքներուն հաղորդ կը հովուէ իւր հօտը մինչեւ 1898:

1898 Փետր. 24ին, Ազարեան Կաթողիկոս անուանեց Արփիարեան տիտղոսաւոր արքեպիսկոպոս Անաւարգայի եւ Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ, եւ մնաց Կ. Պոլիս: Այս միջոցին էր, որ յանձնուեցաւ իրեն երթալ Կարին, ապա Խոտորշուր կարգաւորելու նոյն կողմերու հայ կաթողիկէ Համայնքին գործերը:

Ազգասէր եւ ազգանուէր գործունէութիւնը, զոր ցոյց տուաւ այս շրջանին Արփիարեան, հրաւիրեց իր վրայ Սուլտան Արդիւ Համիդի ցասումը, որուն հետեւութեամբ արքայութեան Լիբանան (1905—1908):

1909, Յունուար 22ին, երբ փոխուեցան քաղաքական հանգամանքները, կարգուեցաւ Արփիարեան Մարաշի թեմին առաքելական-կառավարիչ եւ 1911, Հոկտ. 22 եպիսկոպոս նոյն թեմին: Մինչեւ 1915 գործեց նա թեմիս մէջ բազմարդին գործունէութեամբ. եւ երբ կը տեղահանուէր հայ ժողովուրդը՝ եղաւ արթուն եւ նախահոգ՝ փրկելու թալանէ եկեղեցական շարժական իրերն եւ սուրբ սպասները, զորոնք անվճար հասցուց Հալէպ: Այստեղ, ապա Բէյրութ անցուց մեծ պատերազմի եւ յետ պատերազմեան շրջանը:

1928 Յունիս 28ին, երբ Կաթողիկէ Հայոց կաթողիկոսական-պատրիարքական աթոռը տեղափոխուեցաւ Բէյրութ, Արփիարեան նշանակուեցաւ դարձեալ Բէյրութի Աւագ թեմին Կ. Պատրիարքական փոխանորդ:

Այսպէս, թէպէտ աննպաստ պարագաներու մէջ, քայց ցոյց տուաւ Արփիարեան աշխոյժ գործունէութիւն մը, որով եղաւ արդիւնաւոր եւ սիրելի, եւ արժանաւոր բարձրանալու աւելի բարձրական պատուի, ուր կը գտնուի այժմ:

Մեր բուն մաղթանքն է, որ տայ Բարձրեալն իւր բազկին ոյժ եւ կորով, առաջնորդելու հօտին եւ հանելու զայն յանդորր:

Համաշխարհական պատերազմէն, ինչպէս բովանդակ հայութիւնը, նոյնպէս հայ կաթողիկէ հասարակութիւնը ելաւ քայքայուած, վտարանդի, բազմատանջ, ուժաբեկ: Ներքին եւ արտաքին բարելաւումը ժողովրդեան կենցաղին, յատկապէս ազգային ոգւոյն ինքնապաշտպանութիւնը օրուան պահանջքն է: Եւ վստահ ենք, թէ բազմափորձ եւ աշատըջ անձը Նորին Ամենապատուութեան պիտի ըլլայ գրաւական եւ պիտի գտնէ միջոց բարձրացնելու հայ կաթողիկէ Եկեղեցւոյ ներքին ոյժը եւ արժարձելու հայ կաթողիկէ ժողովրդեան ինքնագիտակցութիւնը:

Թէպէտ իւր բարձր տարիքի մէջ կը հրաւիրուի Նորին Ամենապատուութիւնը բազմիւ հայրապետական գահ, որ գեղեցիկ նշանակ մըն է, թէ քանի վստահութիւն եւ սէր կը վայելէ իւր ժողովրդեան քով, քայց կ'արձանագրենք առանձին ուրախութեամբ, թէ ունի նա իրեն հզօր օգնական եւ ամուր յենարան յանձին Նորին Արհիպատուութեան Տ. Յովնաննէս Արքեպիսկոպոսի Նազչեան, որուն անձնաւորութիւնը իբրեւ ներհուն աստուածաբան, հոետոր, քաղաքագէտ եւ ազգասէր, կը կրէ իր վրայ ամէն ընդունակութիւն ի գլուխ հանելու ամէն ծրագիր, որ պիտի դարձնուի ծերունագարդ եւ փորձառու Նորին Ամենապատուութեան իմաստութեան սալին վրայ ի բարգաւաճանս Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ եւ ժողովրդեան:

Հովուապետին ձայնը պիտի գտնէ ունկնդրութիւն ի գլուխս եւ յանդամս. եւ ձեռն ի ձեռն գործակցութիւնը, հաւատացած ենք, թէ պիտի ստեղծէ հրաշալիքներ, ի շահ հասարակութեան:

Ամենայն ինչ ի փառս Բարձրելոյն, ի շահ Ս. Եկեղեցւոյ եւ ի պայծառութիւն սիրելի Ազգին:

Խմբագրութիւն «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»-ի: